ՀԱՅ ԱԶԳԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ

Մ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Արտադրության սոցիալիստական եղանակի հաստատումից հետո հասարակական կյանքի արմատական վերափոխումների հետևանքով ազգերն ու ազգություններն ստանում են հասարակականորեն բոլորովին նոր՝ սոցիալիստական բնույթ։ Մեր երկրի ազգերի ու ազգությունների սոցիալիստական վերափոխումն սկսվեց Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո և հիմնականում ավարտվեց սոցիալիզմի կառուցման ընթացքում։ Սոցիալիզմից կոմունիզմին անցնելու շրջանում տեղի է ունենում սոցիալիստական ազգերի հետագա ամրապնդումն ու զարգացումը։

ՍՍՌՄ-ում բոլոր ազգերի ու ազգությունների սոցիալիստական վերափոխումն ընթանում էր միևնույն ընդհանրական օրինաչափություններով, սակայն, անկասկած, ամեն մի առանձին ազգի վերափոխումն ուներ այս կամ այն առանձնահատկությունները, որովհետև նրանք սոցիալիստական ռևոլյուցիայի պահին կանգնած էին տնտեսական, քաղաքական և կուլտուրական զարգացման տարբեր աստիճանների վրա, պատմական տարբեր ուղիներ էին անցել։ Սի շարք առանձնահատկություններ բնորոշ էին, մասնավորապես, հայ ազգի սոցիալիստական վերափոխմանը։

Հայ ազգությունը (народность) *պատմական երկարատև անցյալ ունի։ Կազմավորվելով դեռևս մեր թվականությունից առաջ՝ նախնադարյան համայնական հասարակարգի քայքայմանը և դասակարգային հասարակության գոյացմանը համընթաց, այն անցել է հասարակական զարգացման մի շարք աստիճաններ, հասնելով ազգային հատկանիշների և կուլտուրայի բարձր մակարդակի։*

Կապիտալիզմի դարաշրջանում հայ ազգության զարգացումն ունեցավ մի շարք առանձնահատկություններ, որոնք զգալի դեր խաղացին նրա հետագա պատմության համար։ Դա մի դարաշրջան էր, երբ տնտեսական կյանքի ընդհանրության ուժեղացման հետևանքով հին ազգությունների ու էթնիկ խմբերի բազայի վրա ձևավորվում էին եվրոպական ժամանակակից ազգերը։ Թեև Արևելքում այդ պրոցեսը դեռևս չէր սկսվել, սակայն հայ ազգությունը, իր պատմական ճակատագրի ուրույն կողմերի հետևանքով, արդեն XVI—XVII դարերում ընդգրկվեց ժամանակակից ազգերի ձևավորման ընթացքի մեջ։ Ժամանակակից ազգ ձևավորվելու ընթացքը հայ ազգության համար տևեց ավելի երկար՝ ձգվելով մինչև XIX դարի վերջը։

Հայաստանն այդ ժամանակ զրկված էր ինքնուրույն պետականությունից և բաժանված երկու ֆեոդալական տերությունների՝ Թուրքիայի և Իրանի միջև, սակայն նախորդ դարերում հայ ժողովրդի մասնակի ցրման հետևանքով

հայկական գաղութներ էին ստեղծվել Հնդկաստանում, Իտալիայում, Ռուսաստանում, Լեհաստանում, Բալկաններում, Հոլանդիայում, Կոստանդնուպոլսում և այլուր։ Գաղութներում ավելի նպաստավոր պայմաններ կային հայ կուլտուրայի զարգացման համար, մյուս կողմից, մայր երկրի հետ եղած ամենաբազմազան կապերի միջոցով գաղութները ամբողջ ժողովրդի վրա էին տարածում ժամանակակից ազգերի կողմից իրենց կրած ազդեցությունը։ Հայերի ժամանակակից ազգի վերածվելու պրոցեսն առանձնապես ուժեղացավ XIX դարի սկզբում, երբ Արևելյան Հայաստանն ազատագրվեց ֆեոդալական Իրանի լծից և միացվեց Ռուսաստանին։ Ռուսաստանում զարգացող կապիտալիզմի ազդեցությամբ բուրժուական հարաբերություններն սկսեցին զարգանալ նաև բուն Հայաստանում և հիմք հանդիսացան ժամանակակից հայ ազգի ձևավորումը իր ավարտին հասցնելու համար[1]։

Կապիտալիզմի դարաշրջանում ձևավորված ազգերն իրենց հասարակական բնույթով բուրժուական էին, և այդպիսին էր նաև հայ ազգը մինչև սոցիալիստական ռևոլյուցիան։ Այդ ազգերի համար բնորոշ է տնտեսական կյանքի կապիտալիստական ընդհանրությունը, ազգի ներսում հակադիր դասակարգերի գոյությունն ու նրանց պայքարը, ազգային կուլտուրայի մեջ բուրժուական կուլտուրայի տիրապետությունը, բուրժուական գաղափարախոսության և ձգտումների, բուրժուական ազգայնական պարտիաների տիրապետությունը։ Ե՛վ Հայաստանում, և՛ նրանից դուրս գտնվող հայության ներսում անհաշտ դասակարգային պայքար էր գնում կապիտալիստների ու բանվորների միջև, հետադիմական և առաջավոր կուլտուրայի միջև։ Հենց այդ պայքարի ընթացքում կազմավորվեցին ու ամրապնդվեցին այն ուժերը, որոնք ընդունակ էին հիմնովին վերափոխել հասարակական կարգը և ապահովել ազգի հետագա սոցիալիստական կյանքը. այդ ուժերը հայ բանվորությունը և նրա առաջավոր ջոկատը՝ հայ կոմունիստներն էին, ինչպես նաև հայկական սոցիալիստական կուլտուրայի տարրերը։ Մյուս ազգերի և, առաջին հերթին, ռուս բանվոր դասակարգի հետ դաշնակցած, Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ, այդ ուժերը դարձան հայ ազգի հետագա սոցիալիստական վերափոխման հիմնական նախագրյալները։

Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան տապալեց կապիտալիստների ու կալվածատերերի իշխանությունը և մեր երկրում հաստատեց սոցիալիստական կարգեր՝ Սովետական իշխանություն։ Սովետական իշխանության առաջին իսկ միջոցառումները՝ հողի և նրա ընդերքի, գործարանների, ֆաբրիկաների, բանկերի ու երկաթուղիների ազգայնացումը, քաղաքական կարգի վերափոխումը վերացրին շահագործող դասակարգերի տնտեսական ու քաղաքական տիրապետությունը և պետության գլուխ դրեցին բանվոր դասակարգին։ Դրանով իսկ ազգերի ղեկավարությունը բուրժուազիայից ու նրա ազգայնական պարտիաներից անցավ բանվոր դասակարգին ու նրա ինտերնացիոնալիստական պարտիային։ Սկսվեց մեր երկրի ազգերի սոցիալիստական

---

[1] Այդ մասին տե՛ս Վ. Պարսամյան, Հայ ժողովրդի որպես ազգ կազմավորվելու հարցի շուրջը (Հայկ. ՍՍՌ ԳԱ տեղեկագիր, 1952, № 4), Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955, իսկ ավելի հանգամանորեն՝ Մ. Ա. Մելիքյան, Հայ ազգի կազմավորման և նրա սոցիալիստական վերափոխման հարցի շուրջ, Երևան, 1957, 5—98 էջերը։

վերափոխման պրոցեսը, որը նշանավորվեց նրանց ներսում շահագործող դասակարգերի վերացումով, անտեսական կյանքի սոցիալիստական ընդհանրության և դրա հիման վրա նոր տիրապետող հոգևոր կերպարի՝ մարքսիստական-լենինյան գաղափարախոսության, սոցիալիստական քաղաքական և բարոյական ձգտումների, նոր կուլտուրայի ձևավորումով։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայով սկսվեց նաև հայ ազգի սոցիալիստական վերափոխումը, սակայն հայ ազգի հիմնական զանգվածը սոցիալիստական ուղու վրա կանգնեց ավելի ուշ։ Մինչև 1920 թվականի նոյեմբերը Հայաստանում իշխանությունը գրավել էր հայկական բուրժուազիայի ազգայնական պարտիան՝ դաշնակցությունը, որը ոչ միայն մի քանի տարի ուշացրեց ազգի սոցիալիստական զարգացումը, այլև քայքայելով երկիրը՝ նշանակալի իջեցրեց ժողովրդի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի մակարդակը։ Դաշնակների տիրապետությունը Հայաստանը կհասցներ կործանման, եթե 1920 թ. նոյեմբերին չհաստատվեին սովետական կարգեր։

Մեր երկրում սոցիալիզմի կառուցման ընթացքում ավարտվեց ազգերի ու ազգությունների սոցիալիստական վերափոխումը։ Այդ պրոցեսի տնտեսական հիմքը ձևավորված սոցիալիստական արտադրական հարաբերություններն էին. արտադրական միջոցների համաժողովրդական և կոլեկտիվ սեփականությունը. սոցիալական հիմքը բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքն էր. քաղաքական հիմքը՝ պրոլետարիատի դիկտատուրան, Սովետական իշխանությունը։ Պրոցեսի ղեկավար ուժը Սովետական Միության փառապանծ Կոմունիստական պարտիան էր, իսկ այն ապահովող կարևորագույն պայմանը մեր երկրի բոլոր ազգերի աշխատավոր զանգվածների սոցիալիստական համագործակցությունն էր ու ռուս բանվոր դասակարգի եղբայրական անշահախնդիր օգնությունը մյուս ազգերի աշխատավորներին։

Մեր երկրում ազգերի զարգացման առանձնահատուկ մոմենտն այն էր, որ ծայրամասերի ազգերն ու ազգությունները իրենց տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացմամբ ետ էին մնացել Կենտրոնական Ռուսաստանից։ Դրա համար էլ ազգերի իսկական հավասարություն հաստատելու համար իրավական հավասարություն հաստատելուց բացի, անհրաժեշտ էր հասնել նաև նրանց փաստական, այսինքն՝ տնտեսական, քաղաքական և կուլտուրական հավասարության։ Իսկ դա կարելի էր անել այդ ազգերի ու ազգությունների՝ Կենտրոնական Ռուսաստանից ավելի արագ զարգացման միջոցով միայն։ Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության հիմնական օղակը հենց այս փաստական հավասարության ապահովումն էր։ Այդ նպատակին ծառայեց մեր երկրի ժողովուրդների տնտեսական ու քաղաքական ուժերի միավորումը, որն իրականացվեց ազգային սոցիալիստական ռեսպուբլիկաների միավորումով՝ Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկաների Միության մեջ։ Միության, ինչպես և Անդրկովկասի Ֆեդերացիայի գոյությունը հնարավորություն տվեց հաղթահարելու ո՛չ միայն հետամնացությունը, այլև անցյալի ստեղծած ազգային անվստահությունն ու թշնամությունը։

Հայ ազգն իր տնտեսական ու քաղաքական զարգացմամբ նույնպես հետ էր մնացել Կենտրոնական Ռուսաստանից։ Նա համեմատաբար հետ էր մնացել նաև իր կուլտուրական զարգացմամբ, որովհետև, չնայած ժողովրդի ստեղծած բազմադարյան բարձր կուլտուրային, ռևոլյուցիայի պահին ժողովրդական լայն զանգվածները խարխափում էին խավարի ու տգիտության մեջ (բավական

է նշել, որ 1920 թ. հայ ժողովրդի 85 տոկոսը անդրագետ էր), կուլտուրայի մի շարք բնագավառներ (բնական գիտություններ, արվեստի մի շարք ժամանակակից ձևեր) հասկանալի պատճառներով չէին զարգացել։ Սոցիալիզմի կառուցման ընթացքում այդ հետ մնալը լիովին հաղթահարվեց և հայ սոցիալիստական ազգը իր զարդացումով հասավ ամենազարգացած ազգերի մակարդակին։

Ինչպե՞ս ընթացավ հայ ազգի սոցիալիստական վերափոխումը։

Քաղաքական կարգի արմատական հեղաշրջումից հետո առաջնահերթ խնդիրը տնտեսական կյանքի վերափոխումն էր, սոցիալիստական արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ստեղծումը։ Հայաստանի համար դա շատ կարևոր խնդիր էր, որովհետև նախահեղափոխիոն շրջանում հայկական բուրժուազիան զարգացել էր հիմնականում Հայաստանից դուրս, և երկրում բոլորովին բացակայում էր խոշոր արդյունաբերությունը, իսկ դաշնակցության տիրապետության շրջանում եղածն էլ համարյա լիակատար քայքայման էր հասել։ Անհրաժեշտ էր կառուցել ժամանակակից սոցիալիստական մեքենայական արդյունաբերություն, ինչպես և գյուղատնտեսությունը փոխադրել սոցիալիստական ռելսերի վրա և մեքենայացնել։ Համաշխարհային պատերազմի և դաշնակների տիրապետության հետևանքով քայքայված տնտեսության վերականգնման համար պահանջվեց 6—7 տարի, որից հետո միայն Սովետական Հայաստանը Միության մյուս ռեսպուբլիկաների հետ միասին ձեռնամուխ եղավ երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործին։ Առաջին, երկրորդ և երրորդ հնգամյակների տարիներին Սովետական Հայաստանի արդյունաբերությունը արդեն 8,7 անգամ գերազանցեց 1913 թ. մակարդակը (այդ թվում խոշոր արդյունաբերության արտադրանքը աճեց 23 անգամ)[1], Սովետական Հայաստանում ծավալվեցին արդյունաբերության ժամանակակից մի շարք նոր ճյուղեր (քիմիական, էներգետիկական և այլն)։

Սակայն, ինչքան էլ մեծ էր արտադրության աճը, այն չէր գլխավորը։ Գլխավորը, արմատականորեն նորը արդյունաբերության համաժողովրդական, սոցիալիստական բնույթն էր, արտադրության մեջ մարդկանց ընկերական փոխադարձ օգնության և սոցիալիստական համագործակցության հարաբերությունների անվերապահ հաղթանակն ու ամրապնդումը։ Գյուղատնտեսության կոլեկտիվացման հետևանքով սոցիալիստական արտադրական հարաբերությունները հաղթանակեցին նաև գյուղում։ Նախկինում եղած ավելի քան 160 հազար գյուղացիական մանր անհատական տնտեսությունների փոխարեն 1940 թ. Սովետական Հայաստանում արդեն կային ժամանակակից տեխնիկայով զինված 1030 սոցիալիստական խոշոր կոլեկտիվ տնտեսություններ։

Տնտեսական և քաղաքական կյանքի այս արմատական վերափոխումների շնորհիվ Սովետական Հայաստանում, ինչպես ամբողջ ՍՍՌՄ-ում, հաղթանակեց սոցիալիզմը։

Այս փոփոխությունները ազգի տնտեսական կյանքին հաղորդեցին բոլորովին նոր, սոցիալիստական բովանդակություն, որը սոցիալիստական քաղա-

[1] Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР», Статистический сборник, Госстатиздат, Ереван, 1957, էջ 16։

քական կարգի հետ միասին դարձավ ազգի կյանքի մյուս բոլոր կողմերի սոցիալիստական վերափոխման հիմքը։

Սոցիալիզմի կառուցման ընթացքում արմատապես փոխվեց նաև ազգի դասակարգային կազմը։ Երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման ընթացքում վերացվեցին շահագործող դասակարգերի վերջին մնացորդները՝ կուլակները, նեպմանները և այլն։ Ազգի կազմում մնացին միայն աշխատավոր դասակարգերը՝ բանվոր դասակարգը, գյուղացիությունը, ինչպես և սոցիալական մի խավ՝ մտավորականությունը. դրանք նույնպես վերափոխվեցին։ Նախկինում ճնշված ու շահագործվող պրոլետարիատը դարձավ արտադրության միջոցների համաժողովրդական սեփականատեր, հասարակության մեջ իշխանության գլուխ կանգնած բանվոր դասակարգ։ Գյուղացիությունը նախկինում մասնատված ու մասնավոր-սեփականատիրական հիմքերով զարգացող դասակարգից վերածվեց կոլեկտիվ սեփականատեր դասակարգի։ Արմատապես վերափոխվեց մտավորականությունը. նախկին բուրժուական մտավորականության փոխարեն ձևավորվեց բանվորների ու գյուղացիների ծոցից ելած նոր, սոցիալիստական աշխատավորական մտավորականությունը։

Սովետական կարգերի հաստատումից հետո հիմնովին վերափոխվեց նաև ազգի կուլտուրական կյանքը։ Դա արտահայտվեց լայն զանգվածների անգրագիտության լիակատար վերացումով (Սովետական Հայաստանում այդ գործն ավարտվեց 1940 թ.), հանրակրթական դպրոցների ցանցի վիթխարի աճով (1914/15 թթ. երկրում կար 459 հանրակրթական դպրոց 34,7 հազար աշակերտով և մի մասնագիտական դպրոց 100 սովորողով, իսկ 1940/41 թթ. արդեն՝ 1155 դպրոց 326 հազար աշակերտով և 62 տեխնիկում 8,9 հազար ուսանողով)[1]։ Նախասովետական շրջանի Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն (ընդհանրապես աշխարհում չկար որևէ հայկական ԲՈՒՀ), իսկ 1940/41 թթ. Սովետական Հայաստանում գործում էր արդեն 9 ԲՈՒՀ, 111 հազար ուսանողով[2]։

Ժողովրդական կրթության այս քանակական և որակական վիթխարի աճը ուղեկցվեց ազգային կուլտուրայի նոր որակական աստիճանով. պահպանելով և զարգացնելով ազգային ձևը, հայ ժողովրդի, ինչպես և ՍՍՌՄ մյուս ժողովուրդների կուլտուրան ստացավ միանգամայն նոր, սոցիալիստական բովանդակություն։ Դրա հետ միասին զարգացան կուլտուրայի և գիտության ժամանակակից ճյուղերը։ Կատարվեց իսկական կուլտուրական ռևոլյուցիա։

Տնտեսության, քաղաքականության և կուլտուրայի մեջ կատարված այս արմատական հեղաշրջումները հանգեցրին մարդկանց հոգևոր կերպարի՝ մարդկանց գիտակցության, գաղափարախոսության, հասարակական ձգտումների արմատական վերափոխմանը։ Նախկինում տիրապետող սեփականատիրական ձգտումների, ազգայնական գաղափարախոսության, բուրժուական բարոյականության փոխարեն, հասարակության մեջ տիրապետող դարձան սոցիալիստական, կոլեկտիվիստական ձգտումները, մարքսիզմ-լենինիզմի, պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարախոսությունը, սկսվեց բարոյականության վերափոխման պրոցեսը։

---

[1] «Народное хозяйство Армянской ССР», էջ 149։

[2] Նույն տեղում։

Ազգի հոգևոր կերպարի նոր բովանդակությունն առանձնապես ցայտուն դրսևորվեց Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ։ ՍՍՌՄ մյուս ժողովուրդների հետ միասին հայ ժողովուրդը հերոսությամբ պաշտպանեց իր սոցիալիստական Հայրենիքը։ Նոր գաղափարախոսությամբ, նոր ձգտումներով օժտված ժողովուրդը անօրինակ քաջագործություններ կատարեց ռազմի դաշտում և թիկունքում։ Ավելի քան 40 հազար հայ ռազմիկներ պարգևատրվեցին Սովետական Միության շքանշաններով, իսկ 106 հայ ռազմիկներ արժանացան բարձրագույն պարգևի՝ Սովետական Միության Հերոսի կոչման։ Արհավիրքի ծանր տարիներին ամբողջ խորությամբ դրսևորվեց սոցիալիստական ազգի ներքին դասակարգային միասնության, ամբողջ ժողովրդի բարոյական-քաղաքական միասնության հզորությունը։

Հետպատերազմյան տարիներին Սովետական Միության և սոցիալիզմի ամբողջ համաշխարհային սիստեմի քաղաքական, տնտեսական և կուլտուրական վիթխարի հաջողությունները հանգեցրին մեր երկրի ազգերի սոցիալիստական բնույթի հետագա ամրապնդմանն ու զարգացմանը։

Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ միասին այդ տարիներին նոր բարձունքների հասավ հայ ժողովուրդը։ Ժողովրդական տնտեսության, հատկապես արդյունաբերության աննախընթաց աճի շնորհիվ Սովետական Հայաստանը կանգնեց աշխարհի ամենազարգացած երկրների շարքում։ 1958 թ. Սովետական Հայաստանի արդյունաբերության արտադրանքը 55 անգամ գերազանցեց 1913 թ. մակարդակը (իմիջիայլոց դա ամենաբարձր աճն է ամբողջ ՍՍՌՄ-ում)։ Սովետական Հայաստանն այժմ բարձր զարգացած մեքենաշինության, քիմիական, էլեկտրատեխնիկական, տեքստիլ, սննդի արդյունաբերության, մեքենայացված գյուղատնտեսության երկիր է։

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական բուռն զարգացումը պայմանավորեց հայ ժողովրդի նյութական բարեկեցության, նրա կուլտուրայի հետագա աննախընթաց աճը։ Նախասովետական Հայաստանում ժողովրդի կենսամակարդակը շատ ցածր էր, իսկ առաջին համաշխարհային պատերազմի, թուրք ենիչերիների կողմից հայ ժողովրդի մի հսկայական հատվածի բնաջնջման ու տեղահանության, ինչպես և դաշնակների հակաժողովրդական քաղաքականության հետևանքով 1920 թ. այն ծայրաստիճան իջել էր. Հայաստանը դարձել էր գաղթականների ու որբերի, սովի ու համաճարակների երկիր, իսկական «արցունքի հովիտ»։ Գրող Մարիետտա Շահինյանը տվել է երկրի քայքայման բացառիկ ճշգրիտ նկարագրությունը. «Ինչին որ մարդիկ ձեռ չեն տվել, սովն է ձեռք տալիս։ Հաց չկա, գաղթականները փախչում են, դիակներով հողն են ծածկում։ Երկիրը վերածվել է գերեզմանոցի, գյուղերը նման են հնագիտական պեղումների վայրերի՝ գանգամաշկված խրճիթներ, պոկված կտուրներով քառակուսիներ, ինչ-որ փորփորված փոսերի երկար, մռայլագույն շարքեր, չոր ծառեր, չորացած խաղողի այգիներ. մեռա՜ծ, աղքա՜տ, գլխատի՜ծ, արյունաքա՜մ երկիր»[1]։

Այդ սովի ու մահվան, աղքատության ու թշվառության երկիրն այժմ դարձել է բարձր զարգացած արդյունաբերության, ծաղկած այգեստանների ու բերքի դաշտերի, տուֆակերտ հոյաշեն քաղաքների երկիր։ Լիովին վերացվեցին տիֆը, մալարիան, ծաղիկը, խոլերան և համաճարակային այլ հիվանդություն-

[1] *Мариэтта Шагинян*, Советская Армения, Москва—Петроград, 1923, *էջ 39։*

ներ, ապահովվեց բարեկեցիկ կյանք։ Հայ ժողովրդի կենցաղի մեջ հիմնավորապես մտել են տեխնիկայի նվաճումները՝ ռադիոն ու հեռուստացույցը, բազմատեսակ էլեկտրական կենցաղային սարքավորումներ։

Հայ բանվորն ու գյուղացին այժմ ապրում են նյութական բարեկեցիկ պայմաններում, ծերության ժամանակ ապահովված են կենսաթոշակային իրավունքով, անվճար բժշկական օգնություն են ստանում, իրենց զավակներին ձրի միջնակարգ ու բարձրագույն կրթության տալիս, օգտվում են վճարովի արձակուրդներից, անվճար կամ չնչին վճարով հանգստանում ու բուժվում են սանատորիաներում ու հանգստյան տներում։

Բնակչության առողջական բարձր վիճակի ապահովումն ակնհայտ է հենց միայն երկու փաստից. Սովետական Հայաստանում բնակչության յուրաքանչյուր 470 հոգուն ընկնում է 1 բժիշկ, այնինչ նրա հարևան բուրժուական երկրներում 1 բժիշկը սպասարկում է առնվազն մի քանի հազար մարդու։ Սա մի այնպիսի ցուցանիշ է, որին կարող են նախանձել նույնիսկ ամենաղարգացած կապիտալիստական երկրները (իմիջիայլոց ԱՄՆ-ում 1 բժիշկ ընկնում է բնակչության 700 հոգուն)։ Այնուհետև բնակչության բնական աճով Սովետական Հայաստանը գրավում է աշխարհում առաջին տեղերից մեկը՝ 1956 թ. բնական աճը կազմել է 1000 բնակչին 30,4 մարդ։

Հետպատերազմյան տարիներին անշեղ վերելք ապրեց հայ ժողովրդի հոգևոր կուլտուրան։ Ամբողջ ժողովրդի կուլտուր-կրթական մակարդակը հասավ նոր աստիճանի. բավական է նշել, որ արդեն իրականացվում է ամբողջ բնակչության ութնամյա պոլիտեխնիկական կրթությունը։ Ժողովրդի կրթական մակարդակի բարձր աստիճանի մասին է վկայում մասնավորապես այն փաստը, որ բնակչության յուրաքանչյուր 1000 հոգուն ընկնող ուսանողների, ինչպես և բարձրագույն կրթություն ունեցողների քանակով Սովետական Հայաստանն այժմ գերազանցում է ոչ միայն Արևելքի երկրներին, այլև Եվրոպայի բարձր զարգացած կապիտալիստական շատ երկրների։ Սովետական Հայաստանի սոցիալիստական կուլտուրայի, գրականության և արվեստի նվաճումները լայնորեն հայտնի են և բարձր գնահատականի են արժանացել ամբողջ աշխարհում. սովետահայ նկարիչների, կոմպոզիտորների, գրողների, կատարող արտիստների 40 տարում ասպարեզ ելած տաղանդների թվին ու նրանց ստեղծած արժեքներին կարող է նախանձել ամեն մի զարգացած երկիր։ Առանձնապես ակնառու են գիտության հաջողությունները։ Նախասովետական շրջանում եղած ցակավաթիվ հայ գիտնականները գործում էին հայրենիքից դուրս, զբաղվելով հիմնականում բանասիրությամբ և պատմությամբ։ Իսկ այժմ ժողովրդական տնտեսության, գիտության և տեխնիկայի, բարձրագույն կրթության վիթխարի աճի հետևանքով Սովետական Հայաստանում բարձր զարգացման են հասել ժամանակակից գիտության կարևորագույն ճյուղերը՝ մաթեմատիկան ու ֆիզիկան, քիմիան ու երկրաբանությունը, աստղագիտությունն ու մեխանիկան, կենսաբանությունն ու բժշկությունը, պատմագիտությունն ու բանասիրությունը՝ իրենց բազմաթիվ ճյուղավորումներով։

Կուլտուրայի և գիտության այս ձեռքբերումները ազգի ամբողջ զանգվածի զարգացման արդյունքն են։ Սոցիալիզմը կյանքի է կոչել ժողովրդի ընդերքում թաքնված տաղանդներին, որոնց համար անցյալում փակ էր քաղաքականության, գիտության և կուլտուրայի բարձունքները հասնելու ուղին։ Եվ ինչպես մեր երկրի բոլոր ազգերից, այնպես էլ հայ բանվորի ու գյուղացու ծոցից դուրս

եկան գիտության, կուլտուրայի, արվեստի, ռազմական, տնտեսական և այլ բնագավառներում աշխատող բազմաքանակ տաղանդավոր և աչքի ընկնող գործիչներ։

Ահա այսպիսի արմատական փոփոխություններ առաջացրեց սոցիալիզմը Հայ ազգի կյանքում։

Այժմ տեսնենք, թե հասարակական-տնտեսական և հոգևոր կյանքի սոցիալիստական վերափոխումն ինչ ազդեցություն գործեց այն հատկանիշների վրա, որոնց յուրահատկությամբ հայ ազգը տարբերվում է մյուս ազգերից։ Այդ որոշակի հատկանիշները՝ համաժողովրդական (համազգային) հայերեն լեզուն, հայ ժողովրդի տերիտորիալ ընդհանրությունը, տնտեսական կյանքի ընդհանրությունը, որն իր էությամբ բուրժուական էր, բայց հայերի մոտ ուներ յուրահատուկ կապեր ու արտահայտություններ, միայն հայերին հատուկ հոգեբանական կերտվածքի ընդհանրությունը հանդիսացան ժամանակակից հայ ազգի ձևավորման հիմքը։ Հայ ազգի սոցիալիստական վերափոխման ընթացքում այդ հատկանիշները, անկասկած, պահպանվել են, այլապես նա կդադարեր հայ ազգ լինելուց։ Սակայն հայ ազգի այդ հատկանիշները քարացած, անշարժ չեն մնացել, այլ ենթարկվել են նշանակալի փոփոխությունների։ Այդ փոփոխությունները ճիշտ պատկերացնելու համար անհրաժեշտ է առանձին-առանձին վերլուծել ազգի յուրաքանչյուր հատկանիշի զարգացումը սոցիալիզմի պայմաններում։

Հայ ազգի լեզվական ընդհանրությունը ազգի սոցիալիստական վերափոխման ընթացքում ըստ էության մնաց նույնը, նա միայն ավելի զարգացավ և ամրապնդվեց։ Ինչպես և առաջ, այն մարմնավորվում է համազգային հայերեն լեզվի՝ որպես մարդկանց պատմականորեն կազմավորված տվյալ կայուն ընդհանրության անդամների հաղորդակցության միջոցի մեջ։ Արդյոք հայոց լեզվի մեջ փոփոխություններ կատարվեցի՞ն, թե ոչ։ Անպայման, այո։ Այդ փոփոխությունները հանգեցին հետևյալին. լեզվի բառային ակտիվ կազմից դուրս ընկան սոցիալիզմի ժամանակ անհետացած մի շարք հասկացություններ արտահայտող բառերն ու ասացվածքները, ակտիվ բառային կազմի մեջ մտան նոր առաջացած հասկացություններն արտահայտող մի շարք նոր բառեր և, վերջապես, քերականական որոշ հնացած ձևեր փոխարինվեցին նորերով։ Սրանից հետևում է, որ սոցիալիզմի ժամանակ հիմնականում պահպանվեցին հայերեն լեզվի թե՛ բառային կազմը, և թե՛ քերականական կառուցվածքը։ Այսպես, օրինակ, սոցիալիստական վերափոխումից հետո հայերեն լեզվի խոսակցական բառապաշարից համարյա թե լիովին անհետացել են հին վարչական և եկեղեցական հասկացություններ արտահայտող այնպիսի բառեր և արտահայտություններ, ինչպես՝ գզիր, ռես, քյոխվա, ձերդ բարեծննդություն, ծխական դպրոց և այլն։ Իսկ տնտեսական և քաղաքական կյանքում կատարված փոփոխություններն արտացոլող, նոր հասկացություններ արտահայտող և հայոց լեզվի բառային կազմի մեջ մտած բառերից կարելի է նշել գյուղսովետ, հարվածային, նորարար, դասախոս, հեռուստատես, բարձրախոս, կոլտնտեսություն և բազմաթիվ այլ բառեր, ինչպես և այլ լեզուներից նոր հասկացություններ արտահայտող բազմաթիվ փոխառություններ, օրինակ, կոմունիստ, պարտիա, պիոներ, տրակտոր, կոմբայն, էքսկավատոր, ռադիո և այլն։ Հայերենի զարգացման վրա բարերար ազդեցություն ունեցան ՍՍՌՄ մյուս ժողովուրդների լեզուները, հատկապես ռուս ժողովրդի լեզուն, որի մի-

ջոցով հայերեն լեզվին անցան մի շարք գիտական ու տեխնիկական տերմիններ, նոր բառեր ու ոճական արտահայտություններ։

Համազգային հայերեն լեզվի այս զարգացումն, ուրեմն, պետք է ըմբռնվի այն իմաստով, որ ուժեղացավ տվյալ ազգության պատկանող մարդկանց միջև հաղորդակցության միջոցի նրա ֆունկցիան, այսինքն՝ ավելի մեծացավ նրա համազգային (համաժողովրդական) բնույթը։ Այդ տեսակետից չափազանց կարևոր նշանակություն ունեցավ գրական լեզվի կողմից տեղական բարբառների կլանումը (ասիմիլյացումը), որն արագացավ տնտեսական կապերի ամրապնդման, մայրենի լեզվով ժողովրդական կրթության լայն ծավալման, բովանդակությամբ սոցիալիստական, ձևով ազգային հայկական կուլտուրայի աննախընթաց զարգացման շնորհիվ։

Հայ ազգի տերիտորիալ ընդհանրությունը սոցիալիստական վերափոխման հետևանքով ավելի ևս ամրապնդվեց։ Եվ դա միանգամայն հասկանալի է, որովհետև տերիտորիայի ընդհանրությունը կապված է որոշակի տերիտորիայի վրա տվյալ ազգի ժողովրդական զանգվածների պատմականորեն երկարատև կյանքի հետ։ Սոցիալիզմի ժամանակ ազգի տերիտորիան դարձավ ժողովրդի ընդհանուր սեփականություն, այնինչ բուրժուական կարգերում այն բաժանված էր մասնավոր սեփականատերերի միջև։ Այնուհետև, հայ ազգի տերիտորիալ ընդհանրությունն ամրապնդվեց, որովհետև Հայաստանի տերիտորիան դարձավ ՍՍՌՄ-ի կազմում քաղաքական սուվերենություն ձեռք բերած հայ ժողովրդի պետական տերիտորիա՝ իր որոշակի պետական սահմաններով։ Սակայն սոցիալիզմի պայմաններում սուվերեն սոցիալիստական երկրների սահմանները ոչ թե այդ երկրները իրարից բաժանող, մեկուսացնող միջնորմներ են, ինչպես կապիտալիզմի ժամանակ, այլ, ընդհակառակը, նպաստում են նրանց եղբայրական կապերի ամրապնդմանը և առանձին ժողովուրդների տնտեսական, քաղաքական ու կուլտուրական համախմբմանը։

Անհրաժեշտ է նշել, որ Արևելյան Հայաստանի տերիտորիայի մի մասը (Կարսի մարզը և Երևանի նահանգի մի մասը) 1920 թ. գրավվեց Թուրքիայի կողմից և Արևմտյան Հայաստանի հետ միասին մնաց նրա տիրապետության տակ։ Այդ մարզերի բնակչության մի զգալի մասը 1920—1921 թթ. ընթացքում փոխադրվեց Սովետական Հայաստանի ներկա տերիտորիան։ Սովետական Հայաստանի տերիտորիան հանդիսացավ ամբողջ աշխարհով մեկ ցրված հայերի կենտրոնացման հիմնական վայրը։

Հայ ազգի տնտեսական կյանքի ընդհանրությունը սոցիալիստական վերափոխման հետևանքով ստացավ բոլորովին նոր, որակապես տարբեր սոցիալական բովանդակություն։ Մինչև ռևոլյուցիան հայ ազգի տնտեսական կյանքի ընդհանրության հիմքը բուրժուական արտադրական հարաբերություններն էին։ Այդ հարաբերությունները, տնտեսական կապերով միավորելով հայերեն խոսող և որոշակի տերիտորիայի վրա ապրող մարդկանց, ստեղծում էին նրանց տնտեսական կյանքի յուրահատուկ ընդհանրություն։ Բուրժուական արտադրական հարաբերությունները հիմնված էին արտադրության միջոցների և գործիքների մասնավոր-կապիտալիստական սեփականության, մարդու կողմից մարդուն շահագործելու և ազգի ներսում իրար արմատապես հակադիր դասակարգերի գոյության վրա։ Այսպիսով, տնտեսական կյանքի ընդհանրությունը, որպես ազգի հատկանիշ, այն ժամանակ նշանակում էր շահագործող դասակարգի (համ դասակարգերի) տնտեսական և քաղաքական տիրապետություն հա-

սարակության (ազգի) մյուս դասակարգերի և իավերի վրա, սակայն այդ ընդհանրությունը տնտեսական մի ամբողջությամբ կապակցում էր ազգի բոլոր մասերը։

Ազգերի ներսում եղած հենց այդ դասակարգային անտագոնիզմն ի նկատի ունենալով Վ. Ի. Լենինը նշում էր, որ կապիտալիզմի ժամանակ երկու ազգ կա ամեն մի ազգի մեջ։

Հայ ազգի սոցիալիստական վերափոխումից հետո նրա տնտեսական կյանքի ընդհանրությունը հիմնվում է սոցիալիստական արտադրական հարաբերությունների վրա, որոնք բնութագրվում են որպես շահագործումից ազատագրված մարդկանց ընկերական համագործակցության և փոխադարձ օգնության հարաբերություններ։ Այստեղ ազգի տնտեսական կյանքի ընդհանրությունը հանդես է գալիս ո՛չ միայն որպես մարդկանց մեջ գոյություն ունեցող տնտեսական կապ, այլև որպես հասարակության բոլոր սոցիալական խմբերի և դասակարգերի արմատական շահերի ընդհանրություն։ Սոցիալիզմի ժամանակ հայ ազգի ներսում, ինչպես և բոլոր մյուս սոցիալիստական ազգերի ներսում, բացակայում են հակադիր դասակարգերը, չկա մարդու կողմից մարդու շահագործում, դրա համար էլ դեռևս պահպանվող աշխատավորական դասակարգերը բարեկամական դասակարգեր են և ունեն միասնական տնտեսական ու այլ շահեր։

Տնտեսական կյանքի ընդհանրությունը սոցիալիզմի ժամանակ ավելի բարձր աստիճանի ընդհանրություն է, քան կապիտալիզմի ժամանակ, որովհետև, այդ ընդհանրության ներսում այլևս չկան անտագոնիստական հակասություններ, չկան տնտեսական փոխկապակցված և տնտեսապես էլ (ինչպես և՛ քաղաքականապես, և՛ կուլտուրապես) իրար հակադիր դասակարգեր։

Տնտեսական կյանքի ընդհանրությունն իր էությամբ միասնական է մեր երկրի բոլոր ազգերի մոտ, որովհետև նրա հիմքը ամբողջ երկրում արտադրության միասնական սոցիալիստական եղանակն է։ Սակայն դա չի բացառում առանձին ազգերի տնտեսական կյանքի ընդհանրությունների միջև տարբերությունների կամ, ավելի ճիշտ, առանձնահատկությունների գոյությունը։ Այդ առանձնահատկությունները բացատրվում են տվյալ ազգային տնտեսության յուրահատկություններով, որոնք, իրենց հերթին, կախված են բնական պայմանների յուրահատկությունից, այս կամ այն նյութերի առավել արտադրությունից, տվյալ որոշակի կուլտուրայի մշակությունից, ինչպես և տվյալ ազգի պատմական զարգացման առանձնահատկություններից։ Այդ առանձնահատկությունները չեն փոխում ազգերի տնտեսական կյանքի ընդհանրության էությունը, այլ լրացնում են այն, ցույց են տալիս նրա կոնկրետ արտահայտությունը տվյալ կոնկրետ պայմաններում։

Ազգի հոգեբանական կերտվածքի ընդհանրությունը կազմավորվում է մի լեզվով խոսող, մի ընդհանուր տերիտորիայի վրա ապրող և իրար հետ տնտեսական կյանքի ընդհանրությամբ կապված մարդկանց համատեղ կյանքի ու պայքարի պատմական երկարատև ժամանակաշրջանի ընթացքում։ Այս բոլոր գործոններն ազդում են հոգեբանական կերտվածքի վրա և իրենցով պայմանավորում նրա փոփոխությունները։ Ամեն մի ազգի հոգեբանական կերտվածքի (ազգային բնավորության) մեջ կա շատ բան, որն ընդհանուր է մյուս ազգերի հոգեբանական կերտվածքներին, սակայն կա նաև մի ինչ-որ առանձնահատուկ, ուրույն բան, որն արտահայտվում է մտածողության և գործողության

եղանակի, ազգային կուլտուրայի սպեցիֆիկ առանձնահատկությունների մեջ և դրանով իսկ տարբերում մի ազգի բնավորությունը մյուսից։ Հայ ազգի հոգեբանական կերտվածքը մշակվել է պատմական շատ երկար ժամանակաշրջանում՝ նյութական կյանքի պայմանների, ազգության պատմական զարգացման առանձնահատկությունների ազդեցությամբ և այս կամ այն չափով ենթարկվել է այն բազմաթիվ ժողովուրդների հոգեբանական կերտվածքների ազդեցությանը, որոնց հետ առնչվել է հայ ազգությունն իր բազմադարյան պատմության ընթացքում, ինչպես և իր հերթին ազդել է դրանց վրա։ Այս բոլորի հետևանքով մշակվեցին հայ կուլտուրայի այն ուրույն առանձնահատկությունները կամ այն հոգեբանորեն յուրահատուկը, որով հայ ազգի ներկայացուցիչների մտածողության և գործողության եղանակը տարբերվում է մյուս ազգերի ներկայացուցիչների մտածողության և գործողության եղանակից։

Հայ ազգի սոցիալիստական վերափոխման հետևանքով նրա հոգեբանական կերտվածքը լուրջ փոփոխությունների ենթարկվեց։ Սակայն այդ փոփոխությունները չհանգեցրին հին հոգեբանական կերտվածքի անհետացմանը։ Նրանք հանգեցին սոսկ հոգեբանական կերտվածքի անցյալում մշակված առանձին կողմերի վերացմանը։ Դա բացատրվում է նրանով, որ հոգեբանական կերտվածքը ոչ թե դասակարգային, այլ համազգային երևույթ է, որը հատուկ է տվյալ ազգի բոլոր դասակարգերին։ Այն ոչ թե մի ֆորմացիայի արդյունք է, այլ ազգության ամբողջ պատմական զարգացման արդյունքը, սակայն նա այս կամ այն առանձնահատկությամբ է արտահայտվում տարբեր դասակարգերի մոտ, որովհետև հոգեբանական կերտվածքի վրա ազդում է մարդկանց հոգևոր կերպարը (այսինքն՝ գաղափարախոսությունը, քաղաքական, բարոյական, գեղարվեստական և այլ հայացքները), որը դասակարգային երևույթ է։ Սոցիալիստական կարգերը, հաստատելով ազգերի բարեկամություն և սերտ համագործակցություն, դրանով իսկ պայմաններ են ստեղծում տարբեր ազգերի հոգեբանական կերտվածքների մերձեցման համար, նրանց մեջ ավելի ու ավելի շատ նման գծերի երևան գալու համար։

Սոցիալիզմի կառուցման հետ միասին արմատապես փոխվեց հայ ազգի հոգևոր կերպարը։ Մինչսոցիալիստական հասարակարգերում ազգի հոգևոր կերպարը միատարր չէր, տնտեսապես և քաղաքականապես տիրապետող դասակարգի սոցիալ-քաղաքական ձգտումներն արտահայտող գաղափարախոսության և բարոյական գծերի կողքին գոյություն ունեին աշխատավոր դասակարգերի բոլորովին տարբեր սոցիալ-քաղաքական ձգտումներն արտահայտող գաղափարախոսություն և բարոյական գծեր։ Կապիտալիստների, կալվածատերերի, խոշոր առևտրականների, ինչպես և նրանց մնացորդների ու կուլակության լիկվիդացումով մարդկանց քաղաքական, տնտեսական և կուլտուրական կյանքի արմատական վերափոխման հիման վրա ստեղծվեց ամբողջ ազգի միատարր հոգևոր կերպար։

Հայ ազգի նոր հոգևոր կերպարը հիմնականում բնութագրվում է հասարակության մեջ ղեկավարող դասակարգի՝ բանվոր դասակարգի սոցիալ-քաղաքական ձգտումներով ու բարոյականությամբ և արտահայտվում է նոր, անդասակարգ կոմունիստական հասարակարգ կառուցելու ձգտման մեջ։ Այն արտահայտվում է, այնուհետև, շահագործումից ազատագրված մարդկանց փոխադարձ օգնության և սերտ համագործակցության ձգտման, մեր երկրի բոլոր ազգերի և աշխարհի բոլոր ժողովուրդների աշխատավորների հետ եղբայրական

բարեկամության ձգտման, սովետական հայրենասիրության մեջ։ Ազգի նոր հոգևոր կերպարը իր լավագույն արտահայտությունն է գտնում պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքի մեջ, որն արմատապես հակադիր է բուրժուական նացիոնալիզմին։

Սոցիալիստական վերափոխման հետևանքով հայ ազգի հոգևոր կերպարից դուրս մղվեց դեպի մյուս ազգերն ունեցած անվստահության զգացումը և մասնավոր սեփականատիրական հոգեբանությունը, տիրապետող ու մասսայական գարձան այնպիսի նոր երևույթներ, ինչպես կոլեկտիվիզմը, սովետական ամբողջ ժողովրդի բարոյա-քաղաքական միասնությունը, սովետական հայրենասիրությունը, աշխատանքի, հասարակության, ընտանիքի նկատմամբ սոցիալիստական մոտեցումը և այլն։

Այս նոր երևույթները նպաստեցին հայ ազգի հոգեբանական կերտվածքի փոփոխվելուն, նրա մեջ մի շարք հին սովորույթների մահանալուն։

Հայ ազգի սոցիալիստական հոգևոր կերպարը բնութագրվում է, այսպիսով, նոր, սոցիալիստական ձգտումներով, որոնք ամրապնդվել են հայ ազգի մասսաների գիտակցության մեջ։ Այդ նոր հոգևոր կերպարն արտահայտվում է հայ ազգի մեջ տիրապետող դարձած մարքսիստական-լենինյան գաղափարախոսության, նոր գիտական մատերիալիստական աշխարհայացքի մեջ։

Անհրաժեշտ է համառոտակի նշել հայ ազգի վերջին շրջանի զարգացման մի առանձնահատկության մասին։ Պատմական մի շարք հանգամանքների բերումով սոցիալիստական ուղու վրա կանգնեց հայ ազգի այն մասը, որն ապրում էր Արևելյան Հայաստանում, Անդրկովկասում և Ռուսաստանում, իսկ նրա մի ստվար հատվածը դեռևս ցրված է եվրոպական երկրներում, Ամերիկայում, Աֆրիկայում ու Մերձավոր Արևելքում և ապրում է կապիտալիզմի պայմաններում։ Սովետական Հայաստանը աշխարհով մեկ սփռված հայության մայր հայրենիքն է, նրա ինքնուրույն ազգային գոյության հուսալի զորավիգը։ Սովետական իշխանության տարիներին ավելի քան 175 հազար տարագիր հայեր հնարավորություն են ստացել թողնել օտար եզերքները, վերադառնալ մայրենի հող ու միաձուլվել սոցիալիստական կյանքով ապրող իրենց ազգությանը, իրենց նշանակալի ավանդը մուծել սոցիալիստական տնտեսության, գիտության ու արվեստի աննախընթաց վերելքի մեջ ու անարգել զարգացնել իրենց ինքնությունները ու տաղանդը։

***

Սովետական Հայաստանն այսօր Սովետական Միության մյուս ռեսպուբլիկաների հետ միասին թևակոխել է սոցիալիզմից կոմունիզմին ծավալուն անցման ժամանակաշրջանը։ Սովետական Միության Կոմունիստական պարտիայի XXI համագումարի հոյակապ նախագծումներով առաջիկա յոթնամյակում մեր երկիրը ընդհուպ կմոտենա բնակչության մեկ շնչին ընկնող արտադրանքի քանակով կապիտալիստական ամենազարգացած երկրներին հասնելու և անցնելու խնդրի կատարմանը։ Սոցիալիզմի պայմաններում, երբ տնտեսական զարգացումը անշեղորեն ուղեկցվում է ամբողջ ժողովրդի բարեկեցության, նրա քաղաքական ու կուլտուրական մակարդակի, ամբողջ հոգևոր կերպարի աճով, այդ խնդրի լուծումը կհանգեցնի մեր երկրի ազգերի սոցիալիստական բնույթի հետագա ամրապնդմանը, ազգերի հետագա մերձեցմանը։

Առաջիկա յոթնամյակում Սովետական Հայաստանում կկառուցվեն գիտության ու տեխնիկայի ժամանակակից մակարդակով զինված նոր գործարաններ ու ֆաբրիկաներ, կկազմակերպվեն գիտության ու կուլտուրայի նոր օջախներ։ Յոթնամյակի ընթացքում լայնորեն կծավալվի մարդկանց գիտակցության կոմունիստական վերափոխման պրոցեսը, որի հետևանքով կանհետանան անցյալի սովորություններին, ձգտումների, հոգեբանության դեռևս պահպանվող մնացուկները։

Հայ ազգությունը դարերի խորքից հասել է մինչև սոցիալիզմի պայծառ իրականությունը։ Եվ այժմ սոցիալիստական բնույթ ստացած, սոցիալիզմի սիստեմի մյուս սոցիալիստական ազգերի հետ եղբայրաբար դաշնակցած, Կոմունիստական պարտիայի իմաստուն ղեկավարությամբ, նա շարժվում է դեպի կոմունիզմի շողշողուն բարձունքները։

СОЦИАЛИСТИЧЕСКОЕ ПРЕОБРАЗОВАНИЕ АРМЯНСКОЙ НАЦИИ

М. А. МЕЛИКЯН

(Резюме)

Армянская народность образовалась задолго до нашей эры. Проходя ряд ступеней общественного развития, она в XVI—XIX веках сформировалась как одна из современных (буржуазных) наций, с присущими им общественно-экономической организацией и духовным обликом.

После Великой Октябрьской социалистической революции началось социалистическое преобразование всех наций нашей страны, в том числе и армянской нации. В результате построения социализма коренным образом изменились общественно-политическая организация, классовая структура и духовный облик нации. Период перехода от социализма к коммунизму, обеспечивший невиданное ранее развитие экономики, науки и искусства Советской Армении, привел к дальнейшему развитию и укреплению социалистических черт нации.

Социалистическое преобразование общественно-экономической и духовной жизни нации содействовало сохранению и развитию национальных признаков — общности языка, территории, экономической жизни и психического склада нации, а также укреплению общности армянской нации с другими нациями СССР и всей системы социализма.

Одной из особенностей развития армянской нации за последние 40 лет является то, что социалистической стала большая часть нации, а часть ее— примерно одна треть, рассеянная по всему свету, все еще живет в условиях капитализма.

Социалистическое преобразование армянской нации, новая, счастливая жизнь народа и ее великие успехи — результат ленинской национальной политики Коммунистической партии и братского содружества всех социалистических наций.